



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 134/29-Ը

« 14 » 07

2022թ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (Այսուհետև՝ ԵՊՀ) կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետի և 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով.

Հ ր ա մ ա յ ու մ եմ՝

1. Միջկառավարական, միջբուհական պայմանագրերի ինչպես նաև Էրազմուս+ ծրագրի շրջանակներում համալսարանում անհատական ծրագրերով, օտար լեզուներով կարճաժամկետ (մինչև մեկ տարի) ուսումնառություն ստացող արտասահմանցի սովորողներին դասավանդող աշխատողների ժամավճարային վարձատրման համար հիմք ընդունել 1 կրեդիտի դիմաց 5 ժամ ժամավճարային հաշվարկը:

2. Արտասահմանցի սովորողներին օտար լեզվով դասավանդման համար վճարվելիք 1 ժամի արժեքը հաշվարկել ԵՊՀ ռեկտորի 03.07.2019թ. թիվ 121 § 30 հրամանով սահմանված արժեքները 1,5 գործակցով բազմապատկելու միջոցով:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել բոլոր ֆակուլտետներին, հաշվապահությանը և արտասահմանցի սովորողներին դասավանդող դասախոսներին:

Ռեկտոր՝

Հ.Վ. Հովհաննիսյան